Բաշգյուղ

Վարչական ղեկավար՝

Մակերես՝ 10.5կմ^2

Բնակչություն՝ 62

bashgyugh.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 11կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 34կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ: Նախկինում մտել է Երևանի նահանգի ալեքսանդրապոլ գավառի մեջ և Ալքսանդրապոլից արևելք ընկած մյուս Բաշգյուղից տարբերվելու համար մինչև 1880-ական թթ կոչվել է նաև Մեծ Բաշգյուղ: Ունեցել է նաև Բաշգեղ, Բաշգյուղ Երկրորդ, Պաշգյուղ անվանումները:
Գյուղը գտնվում է մեղմաթեք բարձրադիր լանջին՝ ծովի մակարդակից 2020մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:
Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-1830թթ տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից: 1873 թ-ին գյուղն ունեցել է 598, 1919 թ-ին՝ 420, 1931 թ-ին՝ 214, 1959 թ-ին՝ 129, 1979 թ-ին՝ 74 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 62 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51 %: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 26%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 12 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (146հա), խոտհարքերը (37հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 50 և 630 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Բաշգյուղ

Ինդեքս՝ 2809